ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 հունիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

68
(3277)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՆԼՐՋԱՑՆՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 7-ի ընտրությունների քարոզարշավը գնալով ավելի է հիշեցնում ոչ թե իշխանության համար իրական պայքար, այլ քաղաքական մասնակցության հերթական օլիմպիական սկզբունք՝ «կարեւորը մասնակցելն է» տրամաբանությամբ: Թեկնածուների եւ ուժերի ցանկում կան դեմքեր, որոնց մասնակցությունն ինքնին դարձել է ընտրությունների գլխավոր ինտրիգներից մեկը, քանի որ նույնիսկ իրենք դժվար թե հավատան սեփական հաղթանակին:

Անլրջության ամենավառ օրինակներից մեկը նախկին պաշտպանության նախարար, ապա Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի նախկին դեսպան Վաղարշակ Հարությունյանն է, որը «Ռեֆորմիստներ» կուսակցությամբ մասնակցում է ընտրություններին: Մինչ օրս այդպես էլ պարզ չէ՝նա իշխանությա՞ն կողմն է, ընդդիմությա՞ն, թե՞ փորձում է պահպանել քաղաքական չեզոքության հազվագյուտ ռեկորդը: Մի քանի ամիս պաշտպանության նախարար աշխատած Հարությունյանը պաշտոնանկ արվեց առանց հանրային բացատրության, իսկ ավելի ուշ նույնքան անսպասելի հետ կանչվեց նաեւ Մոսկվայում ՀՀ դեսպանի պաշտոնից: Այդ որոշումների պատճառները հասարակությանը երբեք չներկայացվեցին: Ավելին՝ իշխանության ներսում էլ նրան առանձնապես չեն ընդունել քաղաքական դերակատարի կարգավիճակով: Այդուհանդերձ, նա մտել է ընտրապայքարի մեջ՝ լավ գիտակցելով, որ ընտրական հաջողության շանսերը չափազանց սահմանափակ են:

⇨ էջ 3

Հայաստան-Ռուսաստան հարաբերություններում պահպանվող լարվածության եւ Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների շուրջ շարունակվող քննարկումների ֆոնին ՀՀ փոխվարչապետ, վարչապետի պաշտոնակատարի տեղակալ Միհր Գրիգորյանը մասնակցեց Աստանայում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին եւ Հայաստանի անունից հստակ ուղերձներ փոխանցեց ԵԱՏՄ գործընկերներին: Գրիգորյանի ելույթը, ըստ էության, կարելի է գնահատել որպես Երեւանի կողմից իրավիճակը հանդարտեցնելու եւ գործընկերներին վստահեցնելու փորձ, որ Հայաստանը մոտ ապագայում չի պատրաստվում կտրուկ քայլերի գնալ ԵԱՏՄ անդամակցության հարցում: Այսպիսով, Հայաստանի՝միությունից դուրս գալու կամ անդամակցությունը վերանայելու թեման փաստացի հետաձգվեց առնվազն մինչեւ տարեվերջ: «Մենք բազմիցս վերահաստատել ենք Հայաստանի հավատարմությունը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում փոխշահավետ համագործակցությանը՝ի շահ մեր երկրների եւ ընդհանուր առմամբ մեր տարածաշրջանի տնտեսական կայունության ու տնտեսական զարգացման կայունության ապահովման: Հայաստանի Հանրապետությունը մտադիր է նաեւ ապագայում բարեխղճորեն մասնակցել միության աշխատանքներին՝ փոխադարձ հարգանքի, իրավահավասար գործընկերության եւ ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների ազգային շահերը հաշվի առնելու հիման վրա»,- հայտարարել է Միհր Գրիգորյանը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«ՈՒԺեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանը դատական հայց է ներկայացրել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի դեմ՝ պահանջելով հերքում եւ 6 միլիոն դրամի բռնագանձում: Այս մասին տեղեկանում ենք «Դատալեքս»-ից: Ըստ հայցի՝Սամվել Կարապետյանը պահանջում է պարտավորեցնել Ալեն Սիմոնյանին հրապարակայնորեն հերքել 2026 թվականի մայիսի 19-ին Facebook եւ TikTok հարթակներում իր վերաբերյալ արված հայտարարությունը: Սիմոնյանը հայտարարել էր, որ իրավապահները պետք է գնահատական տան, թե որքանով է իրավաչափ արտաքին այլ երկրի հետախուզական ծառայության աշխատակցի կողմից Հայաստանում կուսակցություն հիմնելը եւ քաղաքականության մեջ մտնելը: Հայցադիմումով պահանջվում է, որ հերքումը հրապարակվի Ալեն Սիմոնյանի ֆեյսբուքյան եւ տիկտոկյան էջերում՝ առանց հավելյալ մեկնաբանությունների եւ նույն տեսանելիությամբ, ինչ սկզբնական հրապարակումը: Բացի այդ, Սամվել Կարապետյանը պահանջում է Ալեն Սիմոնյանից բռնագանձել 6 միլիոն դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում, ինչպես նաեւ դատական ծախսերը՝ներառյալ պետական տուրքն ու փաստաբանական վարձատրությունը:

Մարտի 6-ին Երեւանի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ, 1994 թվականին ծնված Ռաֆֆի Մանդալյանը դյուրավառ շշեր էր նետել ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի ուղղությամբ: Դեպքից հետո նրան մեղադրանք է առաջադրվել ահաբեկչության հոդվածով: ArmLur.am-ի տեղեկություններով՝ իրավապահներին տված ցուցմունքում Ռաֆֆի Մանդալյանը բացատրել է, որ իր քայլը պայմանավորված է եղել խորը զայրույթով եւ հիասթափությամբ: Նրա խոսքով՝ իրեն մտահոգում է հայրենիքի անվտանգության վիճակը, իսկ հասարակության մեջ առկա անտարբերությունն ու լռությունը այդ հարցի շուրջ ավելի են խորացրել իր անհանգստությունը: Մանդալյանը նշել է, որ իր գործողությամբ փորձել է ցույց տալ, որ «բոլորը անտարբեր չեն»: Նրա նպատակը եղել է, իր ձեւակերպմամբ, կոտրել հասարակական լռությունը եւ ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ քաղաքացիների մի հատվածը լրջորեն մտահոգված է երկրի ապագայով: Ըստ նույն աղբյուրների՝նա կանխամտածված կերպով ԱԱԾ վարչական շենք է գնացել ոչ աշխատանքային ժամի՝ փորձելով բացառել մարդկային վնասները եւ միաժամանակ ապահովել իր ուղերձի հրապարակայնությունը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԱ ՇԱՏ ԲԱՐԴ ԵՎ ԶԳԱՅՈՒՆ ԹԵՄԱ Է»

ArmLur.am-ը զրուցել է Ամ ղ ա տ գ ա մ ա վ ո ր Հովիկ Աղազարյանի հետ:

-Ընդդիմությունը պնդում է, որ եթե գործող իշխանությունը վերարտադրվի, ապա կարող է քննարկման դրվել շուրջ 300,000 ադրբեջանցիների վերադարձի հարցը: Ի՞նչ եք կարծում՝ սա իրակա՞ն օրակարգ է, թե՞ քարոզչական թեմա:

-Այդ հարցը ներկայացվում է որպես քաղաքական օրակարգ, եւ տարբեր միջազգային հարթակներում երբեմն նման քննարկումներ իսկապես բարձրացվում են՝ հատկապես «Արեւմտյան Ադրբեջան» ձեւակերպման ներքո: Հնարավոր է, որ առաջիկա հանդիպումներում կամ միջոցառումներում այդ թեման կրկին առաջ մղվի եւ նույնիսկ պաշտոնական նամակների մակարդակով փոխանցվի Հայաստանի իշխանություններին:

-Եթե նման պահանջներ առաջ քաշվեն, արդյոք դա կարող է դառնալ իրական բանակցային թեմա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

-Դա կախված է կողմերի քաղաքական որոշումներից: Եթե խաղաղության գործընթացը շարունակվի, կողմերը կարող են փորձել քննարկել նաեւ բնակչության, փախստականների կամ սահմանային հարցեր: Բայց դա շատ բարդ եւ զգայուն թեմա է, որը միանշանակ ընկալում չունի:

-Ի՞նչ է լինելու խաղաղության գործընթացի հետ, եթե ներկայիս իշխանությունը վերարտադրվի:

-Ըստ այս մոտեցման՝ խաղաղության գործընթացը շարունակվելու է, սակայն այն ունի բազմաթիվ չլուծված հարցեր: Դրանց թվում են վերադարձների, անկլավների եւ սահմանների խնդիրները, որոնք կարող են շարունակաբար մնալ բանակցային օրակարգում:

-Ինչպե՞ս եք գնահատում «խաղաղության» ներկայիս վիճակը:

-Կան կարծիքներ, որ որոշ հատվածներում հարաբերական կայունություն կա, սակայն այն դեռ վերջնական եւ կայուն խաղաղություն չի կարելի համարել, քանի որ բազմաթիվ քաղաքական եւ տարածքային խնդիրներ դեռ բաց են:

-Ասվում է նաեւ, որ ադրբեջանցիների վերադարձը կարող է ներկայացվել ոչ թե բնակեցման, այլ զբոսաշրջային ձեւաչափով: Ինչպե՞ս եք գնահատում դա:

-Զբոսաշրջային այցելությունների եւ բնակեցման գաղափարները տարբեր բաներ են: Եթե խոսքը միայն այցելությունների մասին է՝ դա մի ձեւաչափ է, իսկ երկարաժամկետ բնակեցման կամ վերադարձի հարցը արդեն լրիվ այլ քաղաքական եւ ժողովրդագրական խնդիր է:

-Ընդդիմությունը պնդում է, որ իշխանությունը կարող է կիրառել վարչական կամ ուժային մեթոդներ ընտրությունների ժամանակ: Ինչպե՞ս եք վերաբերվում այդ պնդումներին:

-Նման հայտարարությունները հաճախ քաղաքական պայքարի մաս են կազմում: Ընտրական գործընթացներում տարբեր կողմեր իրար մեղադրում են տարբեր մեթոդների կիրառման մեջ, սակայն գնահատականները պետք է տրվեն միայն փաստերի հիման վրա:

-Ինչպիսի՞ հետընտրական զարգացումներ եք կանխատեսում:

-Կան տարբեր սցենարներ. հաղթանակի կամ պարտության դեպքում քաղաքական դաշտում կարող են լինել լարվածություններ, բողոքի գործողություններ կամ իշխանափոխության պահանջներ: Սակայն վերջնական զարգացումները կախված են ընտրությունների արդյունքներից եւ քաղաքական ուժերի վարքագծից:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Նիկոլ Փաշինյանի հետ, այս մասին հայտնում է ՌԴ նախագահի պաշտոնական կայքը: Երկու առաջնորդները հեռախոսազրույցում քննարկել են մայիսի 29-ին Աստանայում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի արդյունքները: Հեռախոսազրույցի ընթացքում ՌԴ նախագահը ՀՀ վարչապետին շնորհավորել է ծննդյան օրվա առիթով եւ բարեմաղթանքներ հղել: Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ երկկողմ եւ բազմակողմ օրակարգի ընթացիկ հարցերի շուրջ: ՀՀ վարչապետը ՌԴ նախագահին շնորհակալություն է հայտնել տարընթերցումների առիթ տվող մի շարք հարցերի վերաբերյալ հավասարակշռված դիրքորոշումների, բարեկամական տոնայնության, ինչպես նաեւ աջակցության համար:

ԷԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Սամվել Կարապետյանի օգնությունը բանակին էական ու բազմազան է եղել, բավական օգտակար է եղել: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը: «Գնահատանքի է արժանի ցանկացած բարեգործություն ու աջակցություն զինված ուժերին, որոնք իրականացվել է մասնավորապես 44-օրյայի ժամանակ: Դա հավաքական մի ներուժ էր, որը պաշտպանության նախարարության զինված ուժերի օգուտ է եղել: Մասնավորապես նաեւ Սամվել Կարապետյանի աջակցությունը, որը բավականին էական է եղել, բազմազան է եղել, եղել է մինչեւ 2018 թիվը, եղել է 2018 թվականից մինչեւ ռազմական գործողություններ, հուսով եմ, որ հիմա էլ կա: Նա բազմակողմանի եւ էական է եղել, կարծում եմ, բոլորդ հասկանում եք, որ իր կարողությունների շրջանակում կարելի է գնահատել բավականին օգտակար: Երեւի բոլորդ գիտեք, չեք էլ կասկածում, որ ես միշտ զսպվածություն եմ ցուցաբերում սենսիտիվ հարցերի վերաբերյալ պատասխաններ տալուն, ինչ վերաբերել է պաշտպանության նախարարությանը, պպաշտպանական համակարգին կամ նույն ռազմական գործողություններին, որոնք 44-օրյային են տեղի ունեցել: Զինված ուժերին աջակցության համար սենսիտիվ տեղեկատվությունը կամ պետական գաղտնիք է պարունակում, կամ ծառայողական գաղտնիք, դրա համար չեմ խախտի իմ պահվածքը՝ արտահայտելու կոնկրետություն որեւիցե աջակցության վերաբերյալ»,- նշել է Տոնոյանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԻՆ ՏՐՈԼԵՅԲՈՒՄՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Երեւանում այսօրվանից հին տրոլեյբուսներ չեն լինի, Երեւան բերված 45 տրոլեյբուսից 30-ը արդեն գիծ է դուրս բերվել եւ շահագործվում են: Այս մասին քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասել է «Երեւանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն Սարգիս Բեջանյանը: «45 նոր տրոլեյբուսից 30-ն արդեն գիծ են դուրս բերվել, վաղվանից (այսօրվանից՝ խմբ.) 15-ն էլ դուրս կգան»,- նշել է նա: Նշենք, որ Երեւանում միայն 1 հին տրոլեյբուս է մնալու, որը նախատեսվում է կամ որպես գրադարան շահագործել, կամ որպես սրճարան: Նշենք, որ այսօր գործակարգավարական խորհրդակցությունը վարում է փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը, քաղաքապետ Տիգրան Ավինյան նախընտրական քարոզարշավով պայմանավորված արձակուրդում է: Հիշեցնենք, որ 2025 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած կառավարության նիստի ժամանակ Տիգրան Ավինյանը հայտարարել էր՝ հաջորդ 45 տրոլեյբուսի ձեռքբերումից հետո ամբողջ տրոլեյբուսային պարկը կթարմացվի:

ԶԱԽԱՐՈՎԱՆ ՀԱՍՏԱՏԵԼ Է

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտնել է, որ Հայաստանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը ներկայումս գտնվում է Մոսկվայում եւ անցկացնում է խորհրդակցություններ: «Նա Մոսկվայում է, անցկացնում է խորհրդակցություններ»,- ՏԱՍՍ-ին ասել է Զախարովան՝ պատասխանելով համապատասխան հարցին: Ավելի վաղ ռուսական լրատվամիջոցները հայտնել էին, որ Կոպիրկինը կանչվել է Մոսկվա՝ խորհրդակցությունների նպատակով: Ըստ այդ հրապարակումների՝ խորհրդակցությունները կապված են Հայաստանի իշխանությունների՝ Եվրամիության հետ մերձեցման ուղղությամբ ձեռնարկած քայլերի հետ: ՌԴ ԱԳՆ-ն առայժմ չի հրապարակել խորհրդակցությունների մանրամասները:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ Է ՄՏՑՆՈՒՄ

Ռոսսելխոզնադզորը սահմանափակումներ է մտցնում Հայաստանից ձկան եւ ձկնամթերքի արտահանման նկատմամբ: «Հունիսի 2-ից Հայաստանը պետք է դադարեցնի Ռուսաստան արտահանման համար նախատեսված կենդանի ձկան եւ ձկնամթերքի անասնաբուժական սերտիֆիկացումը՝ բացառությամբ ստուգում անցած երկու ընկերությունների: Երկու հաստատված գործարաններից ձկնամթերքը կներմուծվի Ռուսաստան՝ անվտանգության ցուցանիշների լաբորատոր մոնիթորինգի ենթարկվելու պայմանով»,-ասվում է գերատեսչության տարածած հաղորդագրության մեջ: Գերատեսչության անցկացրած ստուգումների արդյունքները գնահատվել են անբավարար, իսկ մի շարք ձեռնարկություններ հրաժարվել են ստուգումից:

ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՉԷ

Այն, ինչ Ռուսաստանն ասում է Հայաստանի մասին, իրականում միայն Հայաստանի մասին չէ: Այս մասին X-ի իր էջում գրել է Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկին: «Ռուսաստանն այժմ շատ ավելի բացահայտ է սպառնում մյուս մերձավոր երկրներին, քան նախկինում: Ռուսաստանի յուրաքանչյուր հարեւան լսեց, թե ինչ ասվեց Հայաստանի մասին, որի ժողովուրդը միակն է, ով իրավունք ունի որոշում կայացնելու եւ կընտրի իր երկրի ապագան: Այն, ինչ Ռուսաստանն ասում է Հայաստանի մասին, իրականում միայն Հայաստանի մասին չէ:

Ոչ ոք չի կարող մնալ առանց աջակցության. Եվրոպան իրավունք չունի կորցնելու իր ժողովուրդներից որեւէ մեկին, հետեւում թողնելու որեւէ երկիր: Հայաստանին պետք է աջակցել: Մոլդովային պետք է աջակցել: Մերձբալթյան երկրներին: Ադրբեջանին պետք է աջակցել: Մենք պետք է ուղիներ գտնենք նաեւ Վրաստանի ժողովրդին աջակցելու համար, եւ սա եվրոպական ընդհանուր խնդիր է: Ոչ ոք չի կարող կորսվել»,-գրել է Զելենսկին:

ԻՍՐԱՅԵԼԸ ԿՈՐԾԱՆՈՒՄ Է

Լիբանանի կառավարությունը վճռականորեն տրամադրված է վերջ դնել Իսրայելի ագրեսիային, որը հանգեցնում է ամբողջ քաղաքների ոչնչացման, եւ հասնել օկուպացիոն ուժերի դուրսբերմանը երկրից: Այս մասին հայտարարել է վարչապետ Նավաֆ Սալամը՝ ելույթ ունենալով Սերայի պալատում կայացած մամուլի ասուլիսում: «Այն, ինչ մենք տեսել ենք, ավելին է, քան պարզապես ընդլայնում, սահմանների հատում եւ ներխուժում», - հայտարարել է քաղաքական գործիչը: «Իսրայելը ոչ միայն խախտել է մեր ինքնիշխանությունը, այլեւ վարում է լիակատար ոչնչացման քաղաքականություն»:

Այնուամենայնիվ, Սալամը հաստատել է, որ չնայած իսրայելական բանակի գործողություններին, նա մտադիր չէ հրաժարվել երկկողմ բանակցություններից, որոնց չորրորդ փուլը տեղի կունենա հունիսի 2-3-ը Վաշինգտոնում:

«Այո, բանակցությունների հաջողությունը դեռեւս երաշխավորված չէ, բայց դրանք կապիտուլյացիա չեն», - նշել է նա: «Ամենակարեւորն այն է, որ պատերազմի եւ խաղաղության վերաբերյալ որոշումը այժմ Լիբանանի պետության ձեռքում է»: Վարչապետի խոսքով՝ Լիբանանի տարածքը այլեւս չի ծառայի որպես տարածաշրջանային տերությունների միջեւ հակամարտությունների ասպարեզ:

ՔԱՐՈՋԱՐՇԱՎ

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՆԼՐՋԱՑՆՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 7-ի ընտրությունների քարոզարշավը գնալով ավելի է հիշեցնում ոչ թե իշխանության համար իրական պայքար, այլ քաղաքական մասնակցության հերթական օլիմպիական սկզբունքի՝ «կարեւորը մասնակցելն է» տրամաբանությամբ: Թեկնածուների եւ ուժերի ցանկում կան դեմքեր, որոնց մասնակցությունն ինքնին դարձել է ընտրությունների գլխավոր ինտրիգներից մեկը, բանի որ նույնիսկ իրենք դժվար թե հավատան սեփական հաղթանակին:



Անլրջության ամենավառ օրինակներից մեկը նախկին պաշտպանության նախարար, ապա Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի նախկին դեսպան Վաղարշակ Հարությունյանն է, որը «Ռեֆորմիստներ» կուսակցությամբ մասնակցում է ընտրություններին: Մինչ օրս այդպես էլ պարզ չէ՝ նա իշխանությա՞ն կողմն է, ընդդիմությա՞ն, թե՞ փորձում է պահպանել քաղաքական չեզոքության հազվագյուտ ռեկորդը: Մի քանի ամիս պաշտպանության նախարար աշխատած Հարությունյանը պաշտոնանկ արվեց առանց հանրային բացատրության, իսկ ավելի ուշ նույնքան անսպասելի հետ կանչվեց նաեւ Մոսկվայում ՀՀ դեսպանի պաշտոնից: Այդ որոշումների պատճառները հասարակությանը երբեք չներկայացվեցին: Ավելին՝ իշխանության ներսում էլ նրան առանձնապես չեն ընդունել քաղաքական դերակատարի կարգավիճակով: Այդուհանդերձ, նա մտել է ընտրապայքարի մեջ՝ լավ գիտակցելով, որ ընտրական հաջողության շանսերը չափազանց սահմանափակ են:

Մյուս ուշագրավ կերպարը եւս նախկին պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն է: Վերջինիս պաշտոնանկությունն իրականացվեց բավական կոշտ եւ հրապարակային ձեւով, որից հետո նա հեռացավ Ռուսաստան եւ այնտեղից սկսեց քաղաքական հայտարարություններ անել Հայաստանի ներքաղաքական կյանքի վերաբերյալ: Տպավորություն է ստեղծվում, որ այն, ինչ պետք է ասվեր Երեւանում, ասվում է Մոսկվայից: Կարապետյանը երկար ժամանակ փորձում էր տարբեր քաղաքական ձեւաչափերով վերադառնալ քաղաքական դաշտ, տարբեր ուժերի հետ համագործակցության տարբերակներ էր դիտարկում, սակայն ի վերջո հանգրվանեց Վարդան Ղուկասյանի՝ ԴՕԿ կուսակցության կողքին՝ ոչ սեփական դեմքով, պարզապես աջակից: Սակայն այստեղ եւս խնդիրներն ակնհայտ են: Վարդան Ղուկասյանը Հայաստանում չէ, չի կարող անձամբ մասնակցել ընտրական գործընթացներին, չի կարող գլխավորել ցուցակը, իսկ հեռավար քաղաքական պայքարը դժվար թե վերածվի իրական ընտրական արդյունքի: Քաղաքական դաշտում գրեթե չկա գնահատական, ըստ որի՝ ԴՕԿ-ը կարող է լուրջ հաջողության հասնել այս ընտրություններում: Այդ պատճառով Կարապետյանի ներկայությունն ավելի շատ հիշեցնում է քաղաքական հենարան փնտրելու վերջին փորձ, քան հաշվարկված ռազմավարություն: Եթե Վարդան Ղուկասյանը ղեկավարեր ցուցակը, այլ պատկեր գուցե լիներ, բայց հետապնդումների պատճառով Հայաստանից փախած Ղուկասյանին, բնականաբար, չգրանցեցին որպես թեկնածու: Նա պայքարում է հեռվից, անազատության մեջ, որը արդյունավետ չէ:

Եթե խոսենք ամենաէկզոտիկ եւ խայտառակ մասնակցությունների մասին, ապա առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը եւ Քենիայից Հայաստան վերադարձած Արտակ Սարգսյանի պատմությունը: Սարգսյան եղբայրները մեծ խոստումներով եւ մեծ ծրագրերի հայտարարություններով փորձեցին ներկայանալ որպես նոր քաղաքական երեւույթ: Քենիայի նախկին փոխոստիկանապետ ներկայացած Արտակ Սարգսյանն իր շուրջ ձեւավորվող թիմին ներկայանում էր մեծ հեռանկարներով, ներդրումների, ծրագրերի եւ քաղաքական վերափոխումների խոստումներով, ՄԵԾ ՓՈՂԵՐՈՎ: Սակայն ժամանակի ընթացքում հենց նրա շրջապատում գտնվող մարդիկ սկսեցին բարձրաձայնել, որ խոստումների եւ իրական հնարավորությունների միջեւ հսկայական տարբերություն կա, նա խաբել է բոլորին, խոստացված գումարները, որ պետք է ներդրվեին, չկան, անգամ ՀՀ-ում հաշվեհամար բացելու խնդիրներ ուներ: Ընտրական գործընթացի ժամանակ էլ ակնհայտ դարձավ, որ հայտարարված ռեսուրսներն իրականում չկան, փուչիկ էին: Քաղաքական դաշտում նույնիսկ խոսում են, որ Սարգսյանը փաստացի որեւէ լուրջ ֆինանսական ռեսուրսների չի էլ տիրապետում, ներդրում չի անում սեփական ընտրարշավում՝ սահմանափակվելով միայն խոստումներով: Արդյունքում, թիմը չձեւավորված, պառակտվեց:

Սրանք այն քաղաքական գործիչներն են, որոնք գալիս են դրսից, որոշ ժամանակ ակտիվանում են, մեծ ծրագրեր ներկայացնում, հետո նույն արագությամբ անհետանում: Մի տեսակ քաղաքական գաստրոլյորների տպավորություն են թողնում՝ ժամանակավորապես հայտնվելով հայաստանյան քաղաքական բեմում: Բայց անլուրջ մասնակցությունները միայն արտերկրից եկածներով չեն սահմանափակվում:

Տեղական քաղաքական դաշտն էլ ունի իր մշտական «մասնակիցներին»: Օրինակ՝ Լեւոն Շիրինյանը, որը Քրիստոնեաժողովրդավարական կուսակցությամբ հերթական անգամ մասնակցում է ընտրություններին՝ շատ լավ հասկանալով, որ հաղթանակի կամ նույնիսկ լուրջ արդյունքի հասնելու հավանականությունը գրեթե բացակայում է: Նրա մասնակցությունը վաղուց արդեն ընկալվում է որպես քաղաքական ներկայության պահպանման միջոց, ոչ թե իշխանություն ստանձնելու իրական հայտ:

Նույն շարքում է նաեւ Սուրեն Պետրոսյանը, որը «Ժողովրդավարական համախմբում» նախաձեռնությամբ փորձում է ներկայանալ որպես քաղաքական այլընտրանք: Սակայն քաղաքական դաշտում քչերն են հավատում, որ այդ ուժը կարող է հաղթահարել մրցակցային պայքարի հիմնական խոչընդոտները եւ դառնալ որոշիչ դերակատար: Չնայած դրան՝ մասնակցությունն ապահովված է:

Այս ամենի արդյունքում ընտրական գործընթացում ձեւավորվում է մի պատկեր, որտեղ իրական մրցակցության կողքին գոյություն ունի նաեւ թեկնածուների եւ ուժերի մի զգալի խումբ, որոնք ավելի շատ զբաղեցնում են ցուցակների տողերը, քան պայքարում իշխանության համար: Նրանք ավելացնում են քանակը, բայց ոչ քաղաքական որակը, որը կարձանագրվի հստակ թվերով հունիսի 7-ի երեկոյան՝ քվեատուփերը բացելուց հետո:

Շարունակելի...

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

100 ՀՐԹԻՌ ԵՎ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔ

«Naharnet» լրատվականը հաղորդում է, որ ապրիլի 17-ին հրադադարի ուժի մեջ մտնելուց ի վեր առաջին անգամ շիական «Հըզբոլլահ» շարժումը հրթիռներ է արձակել Իսրայելի հյուսիսում գտնվող բնակավայրերի վրա: Լրատվական կայքի տվյալներով՝ «Իսլամական դիմադրության» զինյալները Իսրայելի տարածքի վրա արձակել են առնվազն 100 հրթիռ եւ անօդաչու թռչող սարք, որոնց մեծ մասը որսվել է «Երկաթե գմբեթ» հակահրթիռային պաշտպանության համակարգի կողմից: 60 բնակավայրերում հնչել են օդային տագնապի ազդանշաններ: Հրթիռային համազարկերը թիրախավորել են Արեւմտյան Գալիլեայի Կարմիել եւ Նահարիա խոշոր քաղաքները, իսկ Վերին Գալիլեայի Կիրյաթ Շմոնա քաղաքը մի քանի ենթարկվել են հարձակման:

ԴԱՏԱՐԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բելառուսական կողմի հասցեին Վլադիմիր Զելենսկու սպառնալիքները դատարկախոսություն են: Այս մասին ասել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, հաղորդում է ՏԱՍՍ-ը: Աստանայում ԵԱՏՄ գագաթնաժողովի շրջանակում պետության ղեկավարին խնդրել են մեկնաբանել Կիեւից հնչող ագրեսիվ հայտարարությունները, այդ թվում՝ Բելառուսի տարածքում որոշակի 500 պոտենցիալ թիրախների մասին: «Նրանք, թերեւս, որոշել են 500 թիրախ: Մենք ունենք մեկ շատ լուրջ թիրախ՝ հստակ կոորդինատներով եւ Բելառուսից բավականին մոտ: Դա չէ՞ որ իրենք էլ են հասկանում», - նշել է Լուկաշենկոն: Ընդհանուր առմամբ, հանրապետության նախագահը Կիեւի նման հայտարարությունները որակել է որպես շաղակրատանք: «Թող Վլադիմիր Ալեքսանդրովիչը ինձ ների դրա համար, բայց սա ինչ-որ դատարկախոսություն է», - ասել է Լուկաշենկոն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՎԹՄԱՆ ՓՈՐՁԻ ՈՒ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Անկախ դիտորդ» դաշինքը իշխանության զավթման փորձի ու փողերի լվացման վերաբերյալ հաղորդում է ներկայացրել դատախազություն.

«Վերջին շրջանում մի շարք հետաքննություններ են հրապարակվել այնպիսի հեղինակավոր լրատվամիջոցների կողմից, ինչպիսիք են The Insider-ը Radio France Internationale-ը, Dossier-ն, Reuters-ը, ինչպես նաեւ Փաստերի ստուգման հարթակը: Հրապարակվել են բարձր արժանահավատությամբ հետաքննություններ, որոնք վկայում են, որ ՌԴ մի շարք պաշտոնատար անձինք, ներգրավելով նաեւ որոշ ՀՀ քաղաքացիների, փորձել են Հայաստանում զավթել իշխանությունը, ինչպես նաեւ, իրականացրել են փողերի լվացում: Մասնավորապես, ըստ նշյալ նյութերի, ՌԴ նախագահի աշխատակազմի եւ հատուկ ծառայությունների մի շարք աշխատակիցներ առերեւույթ պլանավորել, կազմակերպել ու ֆինանսավորել են Հայաստանում հետեւյալ գործողությունները՝

1. Ապատեղեկությունների կանխմտածված գեներացում ու տիրաժավորում՝ հանրային կարծիքի առաջատարների (ԼՕՄ-երի) ու լրատվամիջոցների միջոցով,

2. Քաղաքական ուժերի ֆինանսավորում եւ այդ ուժերին տարատեսակ այլ աջակցությունների տրամադրում,

3. Ռուսաստանում բնակվող ընտրողների նկատմամբ պարտադրանքներ,

4. Վերը նշվածի հետ փոխկապակցված այլ ապօրինի գործողություններ:

Ըստ հետաքննված եւ հրապարակված նյութերի՝ նշված գործողությունների կատարումը նախապատրաստելիս եւ իրականացվելիս պատրաստվել են սխեմաներ, պլաններ ու հատկացվել միջոցներ: «Անկախ դիտորդ» դաշինքի՝ այս ամենի մասին ներկայացված հաղորդումը 15 էջանոց է, բոլոր մանրամասներով: Այն, բացի The Insider-ի Radio France Internationale-ի, Dossier-ի, Reuters-ի, Փաստերի ստուգման հարթակի, հղումներ է պարունակում նաեւ Ֆրանսիայի եւ ԵՄ մի շարք պետական մարմինների կատարած ուսումնասիրություններին:

Դիմումով խնդրում ենք նաեւ ուսումնասիրել «Կովկասի Խրոնիքոնը» կայքում հրապարակված նյութերը ու սխեմաները»:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԴԵՀ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մայիսի 30-ին հրդեհ է բռնկվել Երեւանում: Ժամը 16:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Սոսեի փողոցի տներից մեկում հրդեհ է բռնկվել: Ինչպես հայտնում է Shamshyan.com-ը, դեպքի վայր են ժամանել Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատներից 2 մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Սոսեի 13 հասցեում: Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկներ Ա. Հակոբյանն ու Վ. Հայրապետյանը: Ըստ նախնական տեղեկությունների՝ հրդեհի հետեւանքով բարեբախտաբար տուժածներ չկան:Ժամանել են նաեւ համայնքային ոստիկանները, ովքեր պարզում են սեփականատիրոջ ինքնությունը:

ՍՊԱՆԵԼ Է ԱՋԳԱԿԱՆԻՆ

Մայիսի 30-ին՝ ժամը 8:59-ին, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արմավիրի մարզի Ծաղկունք բնակավայրում վիճաբանության ձայներ են լսվել, հայտնում են ՆԳՆ ոստիկանությունից: Նշված վայր են մեկնել ՆԳՆ ոստիկանության օպերատիվ խմբեր: Պարզվել է, որ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում Ծաղկունքի բնակիչ 62-ամյա տղամարդուն որսորդական հրացանով ոչ սթափ վիճակում կրակել եւ կյանքից զրկել է նույն գյուղի բնակիչ, նրա 48-ամյա ազգականը: Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները դեպքից րոպեներ անց հայտնաբերել եւ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալել ու բաժին են տեղափոխել 48-ամյա տղամարդուն: Հայտնաբերվել է նաեւ որսորդական հրացանը: Հարկ է նշել, որ ոստիկանները շուրջ մեկ տարի առաջ առգրավել են Ծաղկունք գյուղի 48-ամյա բնակչի անունով հաշվառված որսորդական զենքը: Իսկ ինչ վերաբերում է հանցագործության գործիք զենքին, ապա, ըստ նախնական տեղեկությունների, ամիսներ առաջ նշված զենքը 62-ամյա ազգականն էր նվիրել 48-ամյա տղամարդուն: Դեպքի բոլոր հանգամանքները պարզվում են: Կատարվում է նախաքննություն:

20–ԻՑ ԱՎԵԼԻ ԴԱՆԱԿԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Արաբկիրում 60-ամյա կնոջ մահվան դեպքով ՀՀ քննչական կոմիտեում սպանության դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվում է նախաքննություն: Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կնոջ մարմնի վրա շուրջ 20 դանակի հարված է եղել: Ով կամ ովքեր են առանձնակի դաժանությամբ սպանել կնոջը՝ հուսանք, կպարզի քննությունը:

Հայտնել էինք, որ մայիսի 29-ին առեղծվածային մահվան դեպք է տեղի ունեցել Երեւանում:

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ հարեւանները, ովքեր հրաժարվել են տեսախցիկի առաջ խոսել, ասում էին, որ մահացածը 60-ամյա Լուսինե Ս.-ն է, եւ, ըստ հարեւանների միջեւ տեղի ունեցած խոսակցությունների, հնարավոր է, որ կինը սպանվել է: Թե ինչ հանգամանքներում, դա արդեն իրավապահները պարզում են:

Ք. Մ.

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

5 ԿԳ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին հերթական օպերատիվ տեղեկությունը, որ մաքսանենգ ճանապարհով Հայաստան է ներկրվելու առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց: Տեղեկությունն իրացնելիս քրեական ոստիկանները համագործակցեցին Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության ու Կոտայքի մարզի պարեկների հետ: Մայիսի 26-ին՝ ժամը 20:50-ին, Երեւան-Աշտարակ ճանապարհին իրավապահները հայտնաբերեցին 44-ամյա տղամարդկանց, ձերբակալեցին եւ «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենան հանդերձ տեղափոխեցին Համայնքային ոստիկանության Դավթաշենի բաժին: Տղամարդկանցից մեկի խուզարկությամբ հայտնաբերվեց մոտ հինգ կիլոգրամ մարիխուանայով լցված պոլիէթիլային տոպրակ, իսկ մյուսի մոտ նույն զանգվածով լցված փաթեթ: Մայիսի 27-ին նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում երկուսի նկատմամբ էլ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Նրանք կալանավորվել ու տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

2 ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչությունում մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ առանձնապես խոշոր չափերով կանխիկ դրամական միջոցների մաքսանենգություն եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում կատարելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ-ից ստացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ Ս.Ն. եւ Մ.Ն.-ն նպատակ ունենալով առանձնապես խոշոր չափերով կանխիկ դրամական միջոցները ՀՀ պետական սահմանով ապօրինի՝ մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակով ՀՀ տեղափոխելու, դրանք թաքցրել են իրենց ուղեբեռների հագուստների տարբեր հատվածներում, որից հետո 2026 թվականի մայիսի 30-ին ժամանել են «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ ուղեւորների ժամանման սրահի մաքսային հսկողության գոտում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կողմից մաքսային զննման ենթարկվելու արդյունքում ուղեբեռների մեջ առկա հագուստների տարբեր հատվածներից հայտնաբերվել է ընդհանուր առմամբ՝ 956 հզր 400 եվրո կանխիկ դրամական միջոցներ: Վերջիններս անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել են եւ ներկայացվել վարույթ իրականացնող մարմնին:

Քրեական վարույթի շրջանակում իրականացվում են անհետաձգելի վարութային եւ ապացուցողական գործողություններ:

● *Անցած 1 օրում գրանցվել է 17 ավտովթար. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԵԺ ՊԱՅՔԱՐ Է ԼԻՆԵԼՈՒ

ԱԺ ընտրություններին Նիկոլ Փաշինյանի հայրենի Իջեւան քաղաքում թեժ պայքար է լինելու: Իշխող ՔՊ կուսակցությունից պատգամավորության թեկնածուներ են Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ նրա եղբայրը՝ ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյանը: Հայկ Ղալումյանի՝ որպես մարզպետի գործունեությունը կարելի է բնութագրել 2 բանով՝ ոչ արդյունավետ աշխատանքով եւ պետական բյուջեից ստացած միլիոնավոր դրամների պարգեւավճարներով: Վահե Ղալումյանը, գործող պատգամավոր լինելով, անցած 5 տարում Տավուշի մարզի, Իջեւանի ընտրողների հետ ակտիվ շփումներ չի ունեցել, խորհրդարանում էլ իր օրենսդրական նախաձեռնություններով աչքի չի ընկել: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ԱԺ պատգամավորության թեկնածու է նաեւ Նիկոլ Փաշինյանի երիտասարդության ընկեր, քաղաքական համախոհ Արթուր Աթաբեկյանի որդին՝ Իջեւան համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանը: ՔՊ կուսակցությունը Իջեւանում ունի լուրջ մրցակիցներ: «Հայաստան» դաշինքի թեկնածուն է ԱԺ պատգամավոր, ՀՅԴ անդամ Գառնիկ Դանիելյանը: Նա՝ որպես պատգամավոր, միշտ ակտիվ է, վեր է հանում Հայաստանի ու նրա բնակիչների համար կարեւոր խնդիրներ: «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածուն 2011-2019թթ. Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանն է, ով հանդես էր եկել «Իջեւանը մեր տունն է» կարգախոսով: «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից Իջեւանում պատգամավորության թեկնածու է Արա Իսրայելյանը: Նա նախկինում եղել է Իջեւանի ավագանու անդամ:

ՆԱԵՎ ՄԳԵՐ ԱՐՄԵՆԻԱՆ

Դիլիջանում մայիսի 28-ի տոնական միջոցառմանը երգել է Մգեր Արմենիան՝ Մհեր Մեսրոպյանը: Նա նախկինում հանդես էր գալիս վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով, սակայն վերջին շրջանում դարձել է Փաշինյանի իշխանության ջերմ երկրպագուն ու պաշտպանը: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը Մգեր Արմենիային մայիսի 28-ի տոնական միջացառմանը հրավիրել է, որպեսզի մեծ հոնորար վճարի: Նմանապես հումորիստ, դերասան, ՔՊ-ական իշխանության բացահայտ կողմնակից Անդրանիկ Հարությունյանը եւս Դիլիջանում տոնական միջոցառումներ է վարում, բարձր վարձատրվում: Մայիսի 22-ին Ա. Հարությունյանն է վարել Դիլիջանի ամֆիթատրոնում կայացած դպրոցական «Վերջին զանգի» միջոցառումը: Դիլիջանում 2026 թվականի Ամանորի միջոցառումը եւս վարել է Անդրանիկ Հարությունյանը, ով Ամանորի հանդեսին շատ գովաբանել է Դիլիջանի ՔՊ-ական, «արու» համայնքապետ Դավիթ Սարգսյանին եւ նրա խորհրդական Նոնա Գրիգորյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ

ՄՈՍԿՎԱՅԻ ՃՆՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ռուսասան-Հայասան հարաբերություններում վերջին շաբաթներին լարվածությունը հասել է նոր մակարդակի: Ասանայում կայացած ԵԱՏՄ գագաթնաժողովում Ռուսասանի, Բելառուսի, Ղազախսանի եւ Ղրղզսանի ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով Հայասանին հնարավորինս արագ անցկացնել հանրաքվե, որպեսզի հսակեցվի՝ երկիրը ցանկանում է շարունակել անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, թե ընտրում է Եվրամիությանն ինտեգրվելու ճանապարհը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ Հայաստանի համար անհնար է միաժամանակ լիարժեք օգտվել ԵԱՏՄ-ի առավելություններից եւ ինտեգրվել Եվրամիությանը: Նրա խոսքով՝ եթե Հայաստանը որոշի շարժվել դեպի ԵՄ, ապա կդադարեն գործել մի շարք տնտեսական արտոնություններ, որոնցից ՀՀ-ն օգտվում է ներկայումս ԵԱՏՄ անդամ լինելու շնորհիվ:

Պուտինը թվերով ներկայացրեց այն առավելությունները, որոնք, ըստ նրա, Հայաստանը ստանում է ԵԱՏՄ անդամակցությունից: Նա նշեց, որ ներկայում Հայաստանը ռուսական բնական գազը ձեռք է բերում շուրջ 150 եվրո 1000 խորանարդ մետրի դիմաց, մինչդեռ եվրոպական շուկայում նույն ծավալի գազի գինը մոտենում է 600 եվրոյին: Ռուսաստանի նախագահի խոսքով՝ եթե Հայաստանը հրաժարվի ԵԱՏՄ անդամակցությունից, ապա նման արտոնյալ պայմանները չեն պահպանվի:

Պուտինը նաեւ զգուշացրեց, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում Հայաստանը կարող է կորցնել ազատ առեւտրի ռեժիմը միության երկրների հետ, կվերականգնվեն մաքսային սահմանափակումներն ու մաքսատուրքերը, կդադարեցվի տեխնիկական եւ ֆիտոսանիտարական նորմերի փոխադարձ ճանաչումը, կփոխվեն բեռնափոխադրումների գործող կանոնները: Նրա խոսքով՝ հայկական բեռնափոխադրողները կրկին ստիպված կլինեն թույլտվություններ ստանալ Ռուսաստանում աշխատելու համար, իսկ երկաթուղային փոխադրումների սակագները կբարձրանան՝ ներքին ռուսական սակագներից անցնելով ԱՊՀ երկրների համար կիրառվող ավելի բարձր սակագների:

Ռուսաստանի նախագահը նաեւ հայտարարել է, որ փորձագիտական հաշվարկներով նման սցենարը կարող է Հայաստանի տնտեսությանը հասցնել զգալի հարված եւ հանգեցնել առնվազն 14 տոկոս ՀՆԱ-ի կորստի: Նա ընդգծել է, որ Մոսկվան ցանկանում է, որպեսզի որոշումը կայացնի հենց հայ ժողովուրդը, այդ պատճառով էլ աջակցում է հանրաքվեի անցկացման գաղափարին:Սակայն այսօր առավոտյան Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ որեւէ հանրաքվե անցկացնելն անտրամաբանական է:

Մոսկվայի դժգոհությունն արտահայտվեց նաեւ դիվանագիտական հարթությունում: Ռուսաստանը խորհրդակցությունների նպատակով Մոսկվա կանչեց Հայաստանում իր դեսպան Սերգեյ Կոպիրկինին: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ այդ քայլը պայմանավորված է Հայաստանի իշխանությունների այն գործողություններով, որոնք, ըստ ռուսական կողմի, վնասում են ԵԱՏՄ շրջանակներում համագործակցությանը: Դիվանագիտական պրակտիկայում դեսպանի հետկանչը խորհրդակցությունների նպատակով համարվում է հարաբերություններում լուրջ խնդիրների առկայության ազդակ:

Միեւնույն ժամանակ պաշտոնական Երեւանը շարունակում է պնդել, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու հարց օրակարգում չկա: Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը Աստանայում հայտարարել է, որ Հայաստանը մտադիր է շարունակել աշխատանքը միության շրջանակներում եւ հավատարիմ է իր ստանձնած պարտավորություններին: Նրա խոսքով՝ Երեւանը պատրաստ է շարունակել համագործակցությունը ԵԱՏՄ գործընկերների հետ՝ փոխադարձ հարգանքի եւ հավասարության հիման վրա:

Գազը եւս դարձել է հայ-ռուսական քննարկումների առանցքային հարցերից մեկը: Ավելի վաղ ռուսական կողմը ակնարկել էր, որ կարող են վերանայվել Հայաստանի համար գործող էներգետիկ արտոնությունները: Սակայն Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը հայտարարել է, որ ռուսական գազի մատակարարումների հետ կապված որեւէ խնդիր այս պահին չկա: Նրա խոսքով՝ հայկական կողմը ստացել է ռուս գործընկերների նամակը, սակայն դրա բովանդակությունը մամուլում ներկայացվել է ավելի կոշտ, քան իրականում եղել է:

Մինչ Ռուսաստանը պահանջում է հստակ քաղաքական ընտրություն՝ ԵԱՏՄ կամ Եվրամիություն,Հայաստանը շարունակում է պնդել, որ փորձում է համատեղել եվրասիական եւ եվրոպական ուղղությունները՝ առանց կտրուկ քայլերի: Սակայն վերջին զարգացումները ցույց են տալիս, որ Մոսկվայում նման մոտեցումը գնալով ավելի քիչ ընդունելի է համարվում: Այդ պատճառով հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները բազմաթիվ փորձագետներ դիտարկում են ոչ միայն որպես ներքաղաքական պայքար, այլեւ որպես Հայաստանի արտաքին քաղաքական ապագայի շուրջ հասարակական տրամադրությունների կարեւոր ցուցիչ: Ըստ ռուսական կողմի՝ ընտրություններից հետո Երեւանը ստիպված կլինի ավելի հստակ պատասխան տալ այն հարցին, թե որ ուղղությամբ է պատկերացնում երկրի երկարաժամկետ զարգացումը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿ

Ադրբեջանական լրատվամիջոցները գրում են, որ Ռուսաստանից դեպի Հայաստան Ադրբեջանի տարածքով կիրականացվի հերթական տարանցիկ բեռնափոխադրումը: Ըստ հաղորդումների՝ Հայաստան կուղարկվեն երկու վագոն պարարտանյութ, որոնք ճանապարհ կընկնեն Բալաքարի կայարանից դեպի Բյոյուք-Քեսիք ուղղությամբ: Գնացքի մեկնումը նախատեսված է ժամը 14:00-ին: Հիշեցնենք, որ դեռեւս մայիսի 28-ին գրել էինք, որ ըստ ադրբեջանական Trend գործակալության՝ Բալաքարի կայարանից դեպի Բյոյուք-Քյասիք կայարան է ուղարկվել 126 տոննա կարբամիդ պարարտանյութ (2 վագոն) եւ 67 տոննա ալյուր (1 վագոն):

Մինչ այժմ Ռուսաստանից Հայաստան՝ Ադրբեջանի տարածքով տարանցիկ ճանապարհով, տեղափոխվել է ավելի քան 28 հազար տոննա հացահատիկ, ավելի քան 4 հազար տոննա պարարտանյութ, 133 տոննա ալյումին եւ 68 տոննա հնդկաձավար: Trend-ը հիշեցնում է նաեւ, որ տարանցիկ փոխադրումների հետ մեկտեղ Ադրբեջանից Հայաստան արտահանվում են նաեւ նավթամթերքներ: Ըստ հրապարակման՝ մինչ օրս Հայաստան է արտահանվել ավելի քան 10 հազար տոննա դիզելային վառելիք, 979 տոննա ԱԻ-92 եւ 2955 տոննա ԱԻ-95 բենզին:

ԱՎԱՐՏՎԵԼ Է

Ինչպես արդեն հայտնել ենք, Շիրակի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում ընտանիքի անդամներից 4-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ «Ուժեղ Հայաստան»-ի հավաքին մասնակցելու նպատակով մի խումբ անձանց նյութապես շահագրգռելու համար: Մասնավորապես, ընտանիքի անդամները «Ուժեղ Հայաստան»-ի կողմից 2026 թվականի ապրիլի 11-ին կազմակերպված հավաքին հնարավորինս մեծ թվով անձանց մասնակցությունն ապահովելու շարժառիթով՝ նյութապես շահագրգռել են մի խումբ անձանց, այդ թվում՝ անչափահասներին, խոստանալով հավաքից հետո յուրաքանչյուրին մասնակցության համար տալ 10.000-ական դրամ:

Բացի այդ, Երեւան քաղաքի քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում «Ուժեղ Հայաստան»-ի ցուցակում ընդգրկված Վ.Ա.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Լոռու մարզի բնակիչների հավաքագրումը, Երեւան տեղափոխումը, սննդով ապահովումը եւ խոստացված գումարների տրամադրումը համակարգելու համար:

Քրեական վարույթները մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

● *Մայիսի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 6 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 4-ը:*

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ

«Հայկական որոշ կայքերի կողմից տարածվող տեղեկատվությունն այն մասին, թե ՌԴ-ն որոշում է ընդունել ընթացիկ տարում ամբողջությամբ դադարեցնել Հայաստանից ծիրանի ներմուծումը, իրականությանը չի համապատասխանում: Նման որոշումները կայացվում են միայն երկրների լիազոր մարմինների կողմից եւ անմիջապես պաշտոնապես տեղեկացվում մյուս երկրի համապատասխան կառույցին: Տվյալ դեպքում ՌԴ լիազոր մարմնից՝ Անասնաբուժական եւբուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայությունից («Ռոսսելխոզնադզոր»), ՀՀ լիազոր մարմինը՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, որեւէ պաշտոնական ծանուցում չի ստացել: Խնդրում ենք չտարածել ապատեղեկատվություն, վստահեցնում ենք՝ Տեսչական մարմինն աշխատում է թափանցիկ, վարում է բանակցություններ, ցանկացած պաշտոնական տեղեկատվություն հրապարակվելու է»,- հայտնել է ՍԱՏՄ-ն:

ԿՋՐԿՎԻ

Հայաստանը կարող է կորցնել ելակի արտահանումից ստացված գրեթե բոլոր եկամուտները, եթե կորցնի ՌԴ շուկա իր ելակի արտահանման հնարավորությունից:«ՌԻԱ Նովոստին» է հաշվարկել՝ հիմնվելով ՄԱԿ-ի Comtrade հարթակի տվյալների վրա: Անցյալ տարվա առաջին 11 ամիսների ընթացքում Հայաստանի արտաքին վաճառքի ընդհանուր ծավալը կազմել է 12,51 միլիոն դոլար, որից 12,14 միլիոն դոլարը՝ Ռուսաստանինը: Գործակալության հաշվարկների համաձայն՝ 2025 թվականին Երեւանը Մոսկվային մատակարարել է մոտավորապես 13.25 միլիոն դոլարի ելակ՝ ընդհանուր 13.65 միլիոն դոլար արտահանման 97 %-ը: Անցյալ տարի ԱՄԷ-ն, Քաթարը եւ Ղազախստանը նույնպես փոքր քանակությամբ հայկական ելակ են գնել:

Մայիսի 30-ի դրությամբ Ռոսսելխոզնադզորը (Անասնաբուժական եւ բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությունը) սահմանափակել է Հայաստանից մրգերի եւ բանջարեղենի ներմուծումը: Գործակալությունը բացատրել է, որ որոշումը պայմանավորված է այդ ապրանքների Ռուսաստան մատակարարման հետ կապված խախտումների աճող թվով եւ բուսասանիտարական անվտանգությունն ապահովելու համար:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

2026 թվականի հունիսի 22-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով: Մասնակիցների գրանցումը՝ Երեւանի ժամանակով սկսած ժամը 14:00-ից, Ժողովի անցկացման սկիզբը՝ ժամը 14:05-ին:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու հեռ.՝ +374 10 71 22 22, +374 10 59 55 55

IDBANK

ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԻԷՆ ԳԻԼԱՆԻ ԵՎ ԹՈՆԻ ԱՅՈՄԻԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Impacture 2026 կոնֆերանսը դարձավ ոչ միայն բարեգործության, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) եւ հանրօգուտ ներդրումների շուրջ ֆինարկումների հարթակ, այլեւ կարեւոր ու խորհրդանշական նախաձեռնության մեկնարկ:

Կոնֆերանսի ընթացքում հայտարարվեց Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի սաների համար նախատեսված ամենամյա նոր մրցանակների մասին, որոնք կրելու են աշխարհահռչակ երաժիշտներ՝ Deep Purple խմբի վոկալիստ Իէն Գիլանի եւ Black Sabbath խմբի կիթառահար Թոնի Այոմիի անունները:

Նախաձեռնությամբ նախատեսվում է ամեն տարի պարգեւատրել դպրոցի լավագույն վոկալիստներին եւ քանոնահարներին: Իէն Գիլանն ու Թոնի Այոմին սիրով ընդունել են առաջարկը, իսկ IDBank-ը ստանձնել է մրցանակների ապահովումը:

Դպրոցի ղեկավարության կողմից տրամադրված մի քանի վոկալիստ եւ քանոնահար աշակերտների ելույթների տեսագրություններից Իէն Գիլանը եւ Թոնի Այոմին որպես մրցանակակիրների ընտրել էին 6-րդ դասարանի աշակերտ Նարեկ Ջաքարյանին (վոկալ) եւ 4-րդ դասարանի աշակերտ Մոնիկա Ներսիսյանին (քանոն):

Յուրաքանչյուր անվանակարգի համար սահմանված է 150.000 դրամ՝ idcoin-ների տեսքով:

IDBank-ի եւ Idram-ի հաղորդակցության եւ սոցիալական պատասխանատվության ծրագրերի վարչության ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանի փոխանցմամբ՝ Rock Aid Armenia-ն երկարաժամկետ ազդեցություն ունեցող բացառիկ նախաձեռնություն է, որը ոչ միայն վերածնել է կրթօջախ, այլեւ նոր հնարավորություններ ստեղծել տաղանդավոր երեխաների համար:

IDBank-ում մենք եւս առաջնորդվում ենք երկարաժամկետ ազդեցության սկզբունքով՝ վստահ լինելով, որ նույնիսկ փոքր ներդրումը կարող է իրական փոփոխություն բերել: Այդ գաղափարն արդեն վեց տարի իրականություն ենք դարձնում «Մի դրամի ուժը» նախաձեռնության միջոցով»,-նշել է Տաթեւիկ Վարդեւանյանը:

Նախաձեռնությունը սերտորեն կապված է Rock Aid Armenia ծրագրի պատմության հետ, որը սկիզբ է առել Սպիտակի երկրաշարժից հետո՝ աշխարհահռչակ երաժիշտների մասնակցությամբ: 2009 թվականին Մեդիամաքսի նախաձեռնած Armenia Grateful 2 Rock նախագծի արդյունքում, Իէն Գիլանի եւ Թոնի Այոմիի անմիջական մասնակցությամբ, կառուցվեց Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի նոր շենքը:

2019 թվականին Rock Aid Armenia նախաձեռնության 30-ամյակը Հայաստանում նշվեց IDBank-ի գլխավոր գործընկերությամբ: Այդ այցի շրջանակում Իէն Գիլանն ու Թոնի Այոմին այցելել էին նաեւ Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոց:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

«ԻՆՔՈՐ»-Ը ՆՇՈՒՄ Է ՏԱՐԵԴԱՐՁԸ

Օրերս Հայաստանի ազգային պատկերասրահում կայացավ տարվա ուշագրավ ու գեղեցիկ փակ կորպորատիվ միջոցառումներից մեկը: Դասական արվեստի միջավայրում միաձուլվել էր «ԱՐՎԵՍՏ»-ն ու «ՖԻՆԱՆՍ»-ը, որի ականատեսն եղան հայաստանյան գործարար եւ ֆինանսական էլիտան:

Առիթը տեղական ներդրումային շուկայի առաջատարներից «ԻՆՔՈՐ» ընկերության (նախկինում՝ «ՌԵՆԵՍԱ») հիմնադրման 25-ամյակն էր: Միջոցառման ընթացքում ներկայացվեց շուկայում ընկերության անցած ճանապարհը, նորագույն տեխնոլոգիական լուծումների եւ ապագայի տեսլականը:

Անցումային ժամանակաշրջանում «ԻՆՔՈՐ»-ը հաղթահարել է բազմաթիվ փորձություններ եւ 25 տարի անընդմեջ գործելով է իր զբաղեցրել է իր ուրույն տեղը ՀՀ ֆինանսական շուկայում: Ֆինանսական ակտիվները վստահում են նրանց, ովքեր ապացուցել են իրենց դիմացկունությունը ժամանակի մեջ: Այդ վստահության եւ ռիսկերի արդունավետ կառավարման ապացույցը՝ ընկերության շարունակական զարգացումն ու դինամիկ աճն է:

Անդրադառնալով ընկերության անցած ուղուն եւ հաջողության բանաձեւին՝ «ԻՆՔՈՐ»-ի գործադիր տնօրենի տեղակալ Ռիտա Առաքելյանն ընդգծեց. «Այս 25 տարիների երկար ու բարդ ճանապարհի ամենամեծ ձեռքբերումը վստահությունն է»: Նաեւ նշվեց, որ ԻՆՔՈՐ-ի կայունությունը կառուցված է ամուր ինստիտուցիոնալ հենքի վրա. ընկերությունը «ՄԿ» ընկերությունների խմբի անդամ է, որի կազմում է նաեւ անշարժ գույքի եւ քաղաքաշինության ոլորտի խոշոր ընկերություն «ՌԵՆՇԻՆ»-ը:

Քառորդ դարի պատմությունը «ԻՆՔՈՐ»-ի ուժի, հուսալիության եւ փորձի հետ մեկտեղված ճկունության, արդյունավետության եւ պրոֆեսիոնալիզմի բանաձեւը կրողն է: Ժամանակային համընթաց, ընկերությունն այսօր աշխատում եւ զարգանում է դինամիկ, երիտասարդական մտածողությամբ: Ընկերության թիմը համալրված է միջազգային փորձով եւ գիտելիքներով մասնագետներով, ովքեր մշտապես կիրառում են նորարարական մոտեցումներ՝ նպատակ ունենալով ընդլայնել առաջարկվող ֆինանսական գործիքների ցանկը եւ համաշխարհային շուկանն հասանելի դարձնել հայաստանյան ներդրողին:

Այս մասին իր ելույթում խոսեց ընկերության զարգացման գծով տնօրեն Դավիթ Դավթյանը. «Զեւավորված է մտածողություն, որ 25-ամյա գործունեությունը, երբեմն կարող է հանգեցնել ստանդարտացման եւ կոնսերվատիվության: Բայց դա մեր մասին չէ: Մեր թիմի երիտասարդությունը, համարձակությունն ու էներգիան մեզ առաջ են մղում՝ ամրապնդելով մեր դիրքերը տեղական եւ միջազգային շուկաներում»:

Գլոբալ ֆինանսական լուծումները հայաստանյան շուկայում տեղայնացնելու եւ հաճախորդներին նոր հնարավորություններ տրամադրելու նպատակով ազդարարվեց ընկերության ծառայությունների ընդլայնման փուլը: Տեխնոլոգիական արդիականացումը թույլ կտա B2B հատվածին եւ անհատ ներդրողներին ավելի ճկուն կառավարել իրենց պորտֆելները եւ հասանելիություն ունենալ միջազգային բորսաներին «ԻՆՔՈՐ Ինվեսթ» հավելվածի միջոցով:

Պաշտոնական ելույթներն ու թվային տպավորիչ ցուցանիշները ամբողջ երեկոյի ընթացքում ներկայացվեցին արվեստին զուգահեռ. ազգային պատկերասրահում հյուրերը վայելեցին արվեստի ու ֆինանսների կապը խորհրդանշող հատուկ Art Alive գեղարվեստական պերֆորմանսը՝ ընդգծելով «ԻՆՔՈՐ»-ի մոտեցումը. ֆինանսների գրագետ կառավարումը նույնպես արվեստ է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Mi gente Latino

ՋԵՆԻՖԵՐ ԼՈՊԵՍԸ 15 ՏԱՐԻ ԱՆՑ ԲԱՑԱՏՐԵԼ Է

Ամերիկացի հայտնի երգչուհի եւ դերասանուհի Ջենիֆեր Լոպեսը վերջապես անդրադարձել է տարիներ շարունակ համացանցում ֆնարկվող իր հայտնի դարձած «Mi gente Latino» արտահայտությանը, որը նա սխալմամբ ասել էր դեռեւս 2011 թվականին՝ «Ամերիկյան երաժշտական մրցանակաբաշխություն» մրցանակաբաշխության ժամանակ:

Այդ երեկո Լոպեսը հաղթող էր ճանաչվել «Լատինական լավագույն կին արտիստ» անվանակարգում եւ բեմ բարձրանալով՝ հուզված շնորհակալություն էր հայտնել իր երկրպագուներին: Սակայն իր խոսքում նա ասել էր. «Մի խենթե Լատինո», մինչդեռ իսպաներենում ճիշտ տարբերակը «-Մի խենթե Լատինա»-ն է: Լեզվական այս փոքրիկ սխալը տարիների ընթացքում վերածվել է համացանցային մեմի եւ լայն տարածում ստացել սոցիալական ցանցերում, հատկապես TikTok-ում:

Վերջերս իր նոր «Office Romance» ֆիլմի պրեմիերայի ժամանակ MitO-ի լրագրողը Լոպեսին նվիրել է մոմ, որի վրա պատկերված էր հենց այդ հայտնի պահը: Տեսնելով նվերը՝ երգչուհին ծիծաղելով ասել է. «Դուք երբեք չթողեցիք, որ ես մոռանամ դա: Դուք ինձ սիրո՞ւմ եք, թե՞ պարզապես ծաղրում եք»: Լրագրողը պատասխանել է, որ արտահայտությունն այսօր արդեն համարվում է «իկոնիկ» եւ շատերի համար դարձել է փոփ մշակույթի հիշարժան պահերից մեկը: Ի պատասխան՝ Լոպեսն ասել է, որ ինքն իսկապես սիրում է իր երկրպագուներին եւ միշտ մեծ ջերմությամբ է վերաբերվում նրանց:

Աստղը պատմել է, որ այդ պահին չափազանց հուզված էր եւ պարզապես ուզում էր շնորհակալություն հայտնել իր լատինական համայնքին: «Ես այնքան ուրախ էի այդ պահին: Ուզում էի ասել, թե որքան կարեւոր են նրանք ինձ համար: Հետո հասկացա՝ օ՛հ, սխալ ասացի: Բայց արդեն ուշ էր»,-խոստովանել է երգչուհին: Լոպեսը նաեւ զարմանքով նշել է, որ այդ դեպքից արդեն 15 տարի է անցել: «Չգիտեի, որ մարդիկ նույնիսկ հաշվում են տարիները: Այսինքն՝ դա արդեն տարեդարձ ունի: Ստացվում է՝ իսկապես իկոնիկ պահ է դարձել», - ասել է նա ծիծաղելով:

Սա առաջին դեպքը չէ, երբ լրագրողները հիշեցնում են Լոպեսին այդ արտահայտության մասին: 2025 թվականի հարցազրույցներից մեկի ընթացքում լրագրող Ջավի Պոնզոն նույնիսկ առաջարկել էր նրան կրկնել հայտնի խոսքերը: Երգչուհին հումորով արձագանքել էր՝ բացատրելով, որ Նյու Յորքում մեծանալու պատճառով երբեմն լեզվական խառնաշփոթներ են լինում: «Այդ պահին մտածեցի՝ «Լատինո՞» ասել, թե՞ «Լատինա»: Հուզմունքի պատճառով ուղղակի սխալվեցի»,-նշել էր նա: Հատկանշական է, որ «Մի խենթե Լատինո» արտահայտությունն արդեն դարձել է ինտերնետային մշակույթի մի մաս: Նույնիսկ երգչուհի Քալի Ուչիսը 2024 թվականի «Billboard լատինական երաժշտական մրցանակաբաշխության» ժամանակ հումորով հիշատակել էր այն իր ելույթի ընթացքում:

Ի դեպ, Ջենիֆեր Լոպեսի նոր «Office Romance» ֆիլմը կթողարկվի Netflix հարթակում հունիսի 5-ին:

ԿԲԱՑՎԻ ԳՈՐԳԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ ի դեմս Ժաննա Անդրեասյանի եւ բարեւար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանի միջեւ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ որպես կարեւոր եւ խորհրդանշական քայլ Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության եւ զարգացման ուղղությամբ:

Հուշագրի ստորագրմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը: Համաձայն հուշագրի՝ բարերար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանի կողմից նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող անշարժ գույք, ինչպես նաեւ բարերարի անձնական հավաքածուն՝ Հայաստանում գորգերի թանգարանի ստեղծման նպատակով: Նախաձեռնությունը բացառիկ նշանակություն ունի, քանի որ այն հնարավորություն է ստեղծում ձեւավորելու հայկական գորգարվեստին եւ մշակութային արժեք ներկայացնող առարկաներին նվիրված նոր մշակութային կենտրոն: Այն կծառայի ոչ միայն որպես թանգարան, այլեւ որպես կրթամշակութային կարեւոր հարթակ, որտեղ կիրականացվեն թեմատիկ ցուցադրություններ, վարպետաց դասեր, կրթական ծրագրեր եւ այլ մշակութային միջոցառումներ:

Նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել բարերար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանին՝ ազգային մշակութային ժառանգության պահպանության եւ զարգացման գործում ունեցած բացառիկ ներդրման համար. «Անգնահատելի է Ձեր հայրենանվեր այս նախաձեռնությունը: Այն կարեւոր քայլ է հայկական գորգարվեստի պահպանության, հանրահռչակման եւ ապագա սերունդներին փոխանցելու, ինչպես նաեւ ստեղծագործական նոր միջավայր ձեւավորելու տեսանկյունից: Նախաձեռնությունը կարող է դառնալ մշակութային նոր կարեւոր կենտրոնի ձեւավորման հիմք՝ խթանելով նաեւ զբոսաշրջային եւ կրթական հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ»: Նախարարն ընդգծել է, որ գորգի թանգարանի ստեղծումը ամրագրված է նաեւ ՀՀ մշակույթի պահպանման եւ զարգացման ռազմավարությամբ:

Բարերար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանը շնորհակալություն է հայտնել համագործակցության համար՝ ընդգծելով. «Ես շատ խանդավառ եմ այս համագործակցությամբ, որի մասին միշտ մտածել եմ: Վստահ եմ՝ միասնաբար կհաջողենք: Սա նաեւ կարեւոր օրինակ է՝ զարգացնելու Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք հարաբերությունները համատեղ այլ նախաձեռնություններով եւս: Գորգարվեստը հայկական մշակույթի ինքնատիպ եւ կարեւոր բաղադրիչներից է, որն արտացոլում է ժողովրդի պատմությունը, ավանդույթներն ու գեղարվեստական մտածողությունը»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կապահովի թանգարանի մասնագիտական եւ կազմակերպչական կայացումը՝ ներգրավելով անհրաժեշտ մասնագիտական ներուժ, ապահովելով հավաքածուների պատշաճ պահպանումը եւ թանգարանի արդյունավետ գործունեությունը:

Նոր թանգարանի ստեղծումը կնպաստի գորգարվեստի հարուստ ժառանգության պահպանությանը, ուսումնասիրմանը եւ հանրահռչակմանը՝ ապահովելով դրա փոխանցումը հաջորդ սերունդներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՔԱՈՍ

ՊՍԺ-ի երկրպագուները զանգվածային անկարգություններ են հրահրել Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում եւ այլ քաղաքներում՝ նշելով իրենց թիմի հաղթանակը Չեմպիոնների լիգայի եզրափակիչում, գրում է Armsport-ը: Շաբաթ օրը Բուդապեշտում կայացած դրամատիկ եզրափակչում Լուիս Էնրիկեի գլխավորած թիմը հետխաղյա 11-մետրանոցներով հաղթել է լոնդոնյան «Արսենալին»՝ նվաճելով Չեմպիոնների լիգայի գավաթը երկրորդ տարին անընդմեջ: Սակայն ֆուտբոլային տոնը Ֆրանսիայում վերածվել է իսկական քաոսի: Ֆրանսիական պարբերականների փոխանցմամբ՝ ոստիկանության եւ երկրպագուների միջեւ բախումները սկսվել են խաղին զուգահեռ: Մոտ 150 հոգի փորձել է ճեղքել-անցնել ՊՍԺ-ի տնային «Պարկ դե Պրենս» մարզադաշտ, որտեղ հեռարձակվում էր հանդիպումը: Բախումների ժամանակ ֆանատները հրավառության նյութեր են նետել իրավապահների ուղղությամբ, ինչի հետեւանքով ոստիկանությունը ստիպված է եղել արցունքաբեր գազ կիրառել: Արդյունքում առգրավվել են տասնյակ պիրոտեխնիկական միջոցներ, իսկ խաղի ընթացքում արդեն իսկ ձերբակալվել էր 20 մարդ: ՊՍԺ-ի հաղթանակից րոպեներ անց իրավիճակը կտրուկ սրվել է: Ամենալարված մթնոլորտը տիրել է Լե-Ալ թաղամասում եւ Ելիսեյան դաշտերում, որտեղ հատուկջոկատայինները ստիպված են եղել գործողություններ սկսել ագրեսիվ ամբոխը ցրելու ուղղությամբ: Փարիզի 16-րդ թաղամասում երկրպագուները ջարդուփշուր են արել տեղի հացի փուռն ու ռեստորաններից մեկը: «Պարկ դե Պրենսի» հարակից տարածքում իրավապահները շրջափակման մեջ են վերցրել մոտ 1000 երկրպագուի՝ իրավիճակը վերահսկողության տակ պահելու համար: Բախումների արդյունքում վնասվածքներ է ստացել առնվազն մեկ ոստիկան: Ինչպես հայտնում է RMC Sport-ը՝ հղում անելով ֆրանսիական ոստիկանությանը, անկարգությունների մասշտաբներն աննախադեպ են եղել: Ժամը 23:30-ի դրությամբ ողջ Ֆրանսիայում բերման է ենթարկվել 326 անձ, որոնցից 235-ը՝ անմիջապես Փարիզում: Ձերբակալվածներից շատերը կալանավորվել են հետագա դատավարական գործընթացների համար:

ՈՐՈՇԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» հավանական նոր գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն ակնկալում է հաջորդ մրցաշրջանում թիմի կազմում տեսնել 19-ամյա բրազիլացի հարձակվող Էնդրիկին, գրում է Armsport-ը: Այս մասին X-ի իր միկրոբլոգում հայտնել է հայտնի ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն: Ըստ աղբյուրի՝ տաղանդավոր բրազիլացին մտնում է ինչպես պորտուգալացի մասնագետի, այնպես էլ Մադրիդի «Ռեալի» ղեկավարության երկարաժամկետ ծրագրերի մեջ: Ակումբում մեծ հույսեր են կապում երիտասարդ հարձակվողի հետ՝ դիտարկելով նրան որպես թիմի ապագա կորիզի եւ նախագծի կարեւոր մաս: Հիշեցնենք, որ ավարտված մրցաշրջանի երկրորդ հատվածը Էնդրիկը վարձավճարային հիմունքներով անցկացրել է ֆրանսիական «Լիոնում», որտեղ կարողացել է լավագույնս դրսեւորել իրեն:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 7-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Ծուղ-ղու-ղու» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Գագիկ Ղուկասյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է նշանակում երկու պահպանական փաստաթղթերի խնդրարկման վերաբերյալ «Արտոնագրերի մասին» օրենքի դրույթը:

Հրանտ Սողոմոնյան, 43 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միեւնույն գյուտը կարող է լինել գյուտի արտոնագիր ստանալու հայտի եւ գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտի առարկա:

Երկու պահպանական փաստաթղթերի խնդրարկումը կարող է իրականացվել միեւնույն հայտատուի կողմից համապատասխան հայտերը միաժամանակ ներկայացնելու միջոցով:

Եթե հայտատուն ներկայացրել է միեւնույն գյուտի համար գյուտի արտոնագիր ստանալու հայտ եւ գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտ, ապա՝

1) գյուտի կարճաժամկետ արտոնագրի գործողությունը համարվում է դադարեցված գյուտի արտոնագիր տալուց հետո.

2) գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտը, որով գործավարությունը շարունակվում է գյուտի արտոնագիր տալու մասին որոշման կայացման թվականի դրությամբ, համարվում է հետկանչված այդ թվականից:

Մտավոր սեփականության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Օհանավանից դեպի Հովհաննավանք ճանապարհը 6 ամիս է՝ վարորդների, զբոսաշրջիկների եւ ուխտավորների համար դարձել է պատուհաս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 + 15 + 20
Կոտայքի լեռներ	+ 3 + 7 + 15 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 + 21 + 23
Գեղարքունիք	+ 3 + 7 + 14 + 18
Լոռի	+ 5 + 9 + 17 + 20
Տավուշ	+ 5 + 8 + 16 + 20
Արագածոտնի լեռներ	+ 3 + 7 + 15 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 + 21 + 25

Արարատ	+ 10 + 13 + 23 + 26
Արմավիր	+ 11 + 14 + 25 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 + 16 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 14 + 24 + 28
Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 14 + 18
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 + 21 + 25
Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 + 27 + 31
Երեւան	+ 11 + 13 + 25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **01.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*